Նախագիծ

2-րդ ընթերցում

Կ-312²-22.06.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «պաշտոնները» բառից հետո լրացնել «, բացառությամբ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի ղեկավարի տեղակալների պաշտոնների, որոնք օրենքով սահմանված դեպքում կարող են հանդիսանալ նաև սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված պետական ծառայության պաշտոն, որը զբաղեցվում է պետական ծառայության տվյալ տեսակը կարգավորող օրենքով սահմանված կարգով».

2) 5-րդ մասում «ուժով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի ղեկավարի՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված պետական ծառայության պաշտոն զբաղեցնող տեղակալների, որոնք գործում են նաև օրենքով սահմանված լիազորությունների հիման վրա,» բառերը.

3) 6-րդ մասի առաջին նախադասությունում «պաշտոնակատարներ,» բառերից հետո լրացնել «բացառությամբ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի ղեկավարի՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված պետական ծառայության պաշտոն զբաղեցնող տեղակալների,» բառերը.

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում «վարչապետը» բառից հետո լրացնել «, բացառությամբ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի

ղեկավարի՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված պետական ծառայության պաշտոն զբաղեցնող տեղակալների» բառերը:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: